# ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի N 27-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Номер | N 85-Ն |
| Տիպ | Հրաման |
| Тип | Исходный акт (05.05.2020-30.07.2022) |
| Статус | Գործողությունը դադարեցված է |
| Первоисточник | ՀՀԳՏ 2020.05.04/15(683) Հոդ.94 |
| Принят | Կադաստրի կոմիտեի ղեկավար |
| Дата принятия | 17.04.2020 |
| Подписан | Կադաստրի կոմիտեի ղեկավար |
| Дата подписания | 17.04.2020 |
| Дата вступления в силу | 05.05.2020 |
| Ուժը կորցնելու ամսաթիվ | 30.07.2022 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐ**

17 ապրիլի 2020 թվականի N 85-Ն
ք. Երևան

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի N 27-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով՝

***Հրամայում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2012 թվականի փետրվարի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N 06-387-Ն և 2011 թվականի հունիսի 23-ի N 124-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու, Հայաստանի Հանրապետության տարածքում անշարժ գույքի գնահատողի մասնագիտական որակավորման ստուգման կարգը և անշարժ գույքի գնահատողի մասնագիտական որակավորման վկայականի ձևը հաստատելու մասին» N 27-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանով հաստատված՝

ա. N 1 և N 2 հավելվածների գլխագրերից բացի N 1 հավելվածի 2-րդ կետում և Ձև-ում, «ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե» բառերը համապատասխանաբար հոլովաձևերով փոխարինել «Կադաստրի կոմիտե» բառերով,

բ. N 1 հավելվածի 5-րդ, 6-րդ կետի 4-րդ, 14-րդ կետի 1-ին ենթակետերում, 17-րդ, 21-րդ, 24-րդ, 38-րդ, 48-51-րդ, 54-55-րդ, 58-րդ, Ձև-ում և N 2 հավելվածում «կոմիտեի նախագահ» բառերը համապատասխանաբար հոլովաձևերով փոխարինել «կոմիտեի ղեկավար» բառերով.

2) N 1 հավելվածի 35-րդ կետում «120» թիվը փոխարինել «180» թվով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

**Ս. Թովմասյան**